Հաստատված է

_____ ֆակուլտետի խորհրդի

___ նիստում

"____"_____2020 թ.

_____

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու տարում պատմության և հասարակագիտության ֆակուլտետի գործունեությունն իրականացվել է ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանին համապատասխան:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
2020թ. ընդգրկող երկու կիսամյակների գրեթե ողջ ընթացքում ուսումնական գործընթացը , պայմանավորված կորոնա վիրուսով, կազմակերպվել է առցանց՝ googleclassroom հարթակի միջոցով: Առցանց են կազմակերպվել ոչ դասախոսությունները, այլ նաև մանկավարժական պրակտիկաները և քննական գործընթացը: Չնայած առաջին շաբաթներին առկա որոշ տեխնիկական խնդիրներին և պրոֆեսորադասախոսական կազմի ոչ բավարար հմտություններին՝ կարճ ժամանակում ֆակուլտետը, ստանալով Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի մեթոդական աջակցությունը, կարողացել է հաղթահարել ստեղծված խնդիրները և առանց լուրջ թերությունների կազմակերպել ուսումնական գործընթացը: Այդ մասին են վկայում նաև դեկանատի և ամբիոնների կողմից կատարված մշտադիտարկումները: Միշտադիտարկումների արդույնքում արձանագրված հիմնական խնդիրը եղել է ուսանողների բացակայությունները, որի թիվը հատկապես մեծ է եղել հոկտեմբեր ամսին, պատերազմով պայմանավորված: Սակայն հետագայում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: Ֆակուլտետի մեջ ներառված են երեք մասնագիտական ամբիոններ՝ Հայոց պատմության, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի, Հասարակագիտության: Ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատում են 29 մասնագետներ, որից համատեղության կարգով՝ 9 դասախոս: Ֆակուլտետի վարչական աշխատանքները համակարգվում են դեկանատի կողմից: Ֆակուլտետն ընդհանուր առմամբ ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու ուղղությամբ: Հաշվետու տարում ֆակուլտետի կառավարումն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության համաձայն: Հաշվետու տարում ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին համաձայն տեղի է ունեցել 9 նիստ, որի ընթացքում քննարկվել են օրակարգային և ընթացիկ հարցեր, կայացվել են համապատասխան որոշումներ /Տե՛ս ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ/: Ֆակուլտետի խորհուրդը ընթացիկ տարում կազմված է եղել 28 անդամներից, որտեղ բացի

ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ընդգրկված են եղել ուսանողներ, որոնք կազմում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը: Ընթացիկ տարում ֆակուլտետի խորհրդում ընգրկված են եղել ութ ուսանողներ, այդ թվում ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները, որը ֆակուլտետի ուսանողությանը ևս հնարավորություն է ընձեռել մասնակցելու ֆակուլտետի կառավարման և որոշումների կայացման աշխատանքներին: ֆակուլտետի ամբիոնների ներկայացուցիչների համամասնական ներկայացվածությունը ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին հնարավորություն է տվել դասախոսական կազմին մասնակցել ֆակուլտետի որոշումների կայացման գործընթացին: Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է նաև ընդլայնված կազմով խորհրդի նիստ, որին մասնակցելու հրավեր են ստացել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր ներկայացուցիչներին: Պարբերաբար կազմակերպվել են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվել են ընթացիկ հարցեր և կայացվել որոշումներ: Հաշվետու տարում ֆակուլտետում աշխատանքների պլանավորումն իրականացվել է ուսումնական պլանների, ֆակուլտետի խորհրդի աշխատանքային ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության հիման վրա նախատեսված առաջնահերթություններով: ֆակուլտետի դեկանատի և ամբոիների կողմից կատարվել են ընթացիկ տարվա գործունեության մշտադիտարկում: Ամբիոնների վարիչների կողմից նախատեսված ծանրաբեռնվածություն համապատասխան իրականացվել է դասալսումներ: Արձանագրվել են առկա խնդիրը, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, տրվել են առանձին հանձնարարականներ:

III. ֆԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
(տեքստը այստեղ
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)
ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Հաշվետու շրջանում ֆակուլտետի պատմության բաժնի երրորդ կորսի մեկ ուսանող՝ Միլա Ճատրյանը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի կրթաթոշակով մեկ տարի ուսանել է Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում: ֆակուլտետի երկու դասախոսներ Հայոց պատմության ամբիոնից՝ Է.Հովհաննիսյան և Ս.Պողոսյան, 2020թ. մարտ ամսին մեկ շաբաթով Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակներում դասավանդել են Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում համալսարանում: Ընթացիկ տարում աշխատանքներ են տարվել ֆակուլտետի գործընկեր Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ: Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը հայաստանյան մի քանի գործընկերների հետ

շահել է **Jean Monnet** ծրագրով նախատեսված նախագիծ հետևյալ խորագրով՝ "Promoion of the European Studies in Armenia" (PROMOEU) : Ծրագրի մեկնարկը նախատեսվում է սկսել 2021 թվականին:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:			
Բակալավրի		առկա	170
		հեռակա	156
Մագիստրոսի		առկա	48
		հեռակա	22
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1			
2			
3			
4			
5			
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Շիրակի պետական համալսարան /Հայաստան/	1	
2			
3			
4			
5			
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը		12
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը		

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Հաշվետու տարում, պայմանավորված ստեղծված իրավիճակով, ուսոանողների հավաքագրմանն ուղղված աշխատանքներն հիմնականում իրականացվել են սոցիալական ցանցերի միջոցով համապատասխան տեղեկատվական և իրազեկման նյութերի տարածման միջոցով:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Ֆակուլտետից ուսանողները հեռացվել են երկու պատճառով.

1. Ուսման վարձը չվճարելու
2. Անբավարար առաջադիմության

Որոշ ուսանողներ էլ ֆակուլտետից ազատվել են բանակ զորակոչվելու պատճառով

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:	
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:	
Բակալավր	
Մագիստրոս	
Ընդհանուր	
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված	

ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		
2		
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1		
2		
3		
4		

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ընթացիկ տարում ֆակուլտետում դասախոսների մասնագիտական որոակների բարձրացմանն ուղղված սեմինարներ և նմանատիպ այլ միջոցառումներ չեն իրականացվել: Ֆակուլտերի երեք ամբիոններում աշխատում են 29 մասնագետներ, որոնց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները լիովին բավարարում են արդյունավետ և որակյալ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար՝ համապատասխան ֆակուլտետի ռազմավարությանն ու ՄԿԾ-ներին համապատասխան: **Հայոց պատմության ամբիոն՝ աշխատում է 15 մասնագետ, որից 2 համատեղության կարգով** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-1 Պրոֆեսոր – 7 դոցենտ – 7 դասախոս – 1 Պատմ. գիտ. թեկնածու – 10 Պատմ. գիտ. դոկտոր – 5 Մանկ. գիտ. թեկնածու – 1 **Հասարակագիտության ամբիոն՝աշխատում է 13 մասնագետ, որից 1 համատեղության կարգով** Պրոֆեսոր- 3 Դոցենտ- 6 Դասախոս- 2 ի.գ.թ.-6

ի.գ.դ.-2 ք.գ.դ-1 **Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն աշխատում է 12 մասնագետ, որից 3 համատեղության կարգով** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-1 Պրոֆեսոր- 3 Դոցենտ- 8 Դասախոս- 1 պ.գ.դ-4 պ.գ.թ-8

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:			
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: (տեքստը այստեղ)			
Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:			
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1			
2			
3			
4			
5			
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1			
2			
3			
4			
5			
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1			
2			
3			
4			
5			
Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ) ● 2020 թ. դեկտեմբերին ֆակուլտետի ջանքերով հրատարակվել է <The collapse of empires in the 20th century: new states and new identities> կոլեկտիվ մենագրությունը, որի աշխատանքներին			

մասնակցել են 7 երկրների (Հայաստան, Արցախ, Ֆրանսիա, Հունգարիա, Սլովակիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա), 10 գիտակրթական հաստատությունների 25 գիտնականներ:
Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:
Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ): (տեքստը այստեղ)

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ներկայում ֆակուլտետում գոյություն ունեն տեխնիկապես վերազինված 12 լսարաններ, որոնք հագեցված են ինտերակտիվ ուսուցում ապահովելու համար անհարժեշտ տեխնիկայով /հեռուստացույցներ, պրոյեկտորներ, համապատասխան համակարգիչներ/ և լիովին համապատասխանում են ֆակուլտետի առկա կարիքների բավարարմանը: Ֆակուլտետը հագեցված է որակյալ ինտերնետային կապով: Ֆակուլտետում գործում է համալսարանի գրադարանի ընթերցասրահներից մեկը, որը հագեցած է համաակարգիչներով և մասնագիտական գրականությամբ: Ներկա դրությամբ ֆակուլտետի տեխնիկական հագեցվածությունը հիմնականում բավարարում է ֆակուլտետի շահակիցների՝ պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական ապարատ և ուսանողներ, կարիքները:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետի գործունեության հիմնական ընթացքը լուսաբանվել է համալսարանի կայքէջի համապատասխան բաժիններում: Ֆակուլտետի ուսանողները և շահագրգիռ շրջանակները առցանց , բանավոր և տարբեր հայտարարությունների միջոցով պարբերաբար տեղեկացվել են ուսումնական գործընթացի, ֆակուլտետի գործունեության մասին: Հաշվետու տարվա ընթացքում Հաջողության բանաձև հաղորդման շրջանակներում պատրաստվել է երկու հաղորդում՝ ֆակուլտետի մասնագետների և ուսանողների մասնակցությամբ: Ֆակուլտետի գործունեությունը ներկայացվել են նաև հեռուստատեսային և ռադիո տարբեր այլ հաղոդումներում: Ֆակուլտետի գործունեությունը և շփումը շահագրգիռ շրջանակների հետ ապահովվել է նաև ֆակուլտետի և ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջերի միջոցով:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և

կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
2020 թվականի ֆակուլտետում իրականացվել են մի շարք աշխատանքներ միջազգայնացման և արտասահմանյան գիտակրթական հաստատությունների հետ հետագա համագործակցության ընդլայնման ուղղությամբ: Շարունակվել է համագործակցությունը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ: Սակայն հաշվետու տարվա ընթացում, պայմանավորված կորոնավիրուսի պատճառով ներդրված սահմանափակումների, տեղի չեն ունեցել փոխայցեր: Հաշվետու շրջանում ֆակուլտետի պատմության բաժնի երրորդ կուրսի մեկ ուսանող՝ Միլա Ծատրյանը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի կրթաթոշակով մեկ տարի ուսանել է Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում: Ֆակուլտետի երկու դասախոսներ Հայոց պատմության ամբիոնից՝ Է.Հովհաննիսյան և Ս.Պողոսյան, 2020թ. մարտ ամսին մեկ շաբաթով Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակներում դասավանդել են Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում: Ֆակուլտետի մի շարք մասնագետներ առցանց ձևաչափով մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների: Ֆակուլտետը համագործակցել է նաև հայաստանյան մի շարք մասնագիտական գիտական և ուսումնական հաստատությունների հետ:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Արտաքին կապերի զարգացման և ֆակուլտետի միջազգայնացման համար ֆակուլտետի հնարավորությունների և մարդկային ռեսուրսների հաշվառման համար պատրաստվել է օտար լեզուներով դասավանդող դասախոսների ցանկը և համապատասխան առարկաները: Աշխատանքներ են տարվում այդ առարկաների համար համապատասխան նկարագրեր և առարկայական տրոհումներ պատրաստելու ուղղությամբ:

Faculty Historu and Social Science

List of courses in foreign languages

	Lecturars	Course	Language	Credits
1.	Edgar Hovhannisyan (Doctor of History, Associated professor)	The Armenian Diaspora: The formation, structure, and nowadays action	English	2

		.			
2	Edgar Hovhannisyan (Doctor of History, Associated professor)	Armenian religious-spiritual organizations. History and modernity.	English	2	
3.	Khachatur Stepanyan (Doctor of History, Professor)	The Armenian National Liberation movement in the end of the 19th century and early 20th century.	English	2	
4.	Khachatur Stepanyan (Doctor of History, Professor)	The Sovietisation of the Transcaucasia	English	2	
5.	Samvel Pogosyan (Doctor of Historical sciences, Professor)	The Armenian Genocide. The causes, process, consequences.	English	2	
6.	Yervand Grekyan (Doctor of Historical sciences)	History and Culture of The Armenian Highland in the context of The Ancient Near East.	English	2	
7.	Aram Kosyan (Doctor of Historical sciences, Professor)	The Armenian civilization.	English	2	
8.	Susanna Khachtryan (PhD in History, Associated professor)	Armenian Art and Culture.	English	2	

9.	Michael Badalyan (PhD in History)	Archeology of Armenia	English	2	
10.	Miqayel Badalyan (PhD in History)	Historical and archaeological museums of Armenia (research seminar)	English	2	
11.	Григорян Айк Ишханович (кандидат исторических наук, доцент)	История Армени XIX-XXвв.	Русский	2	
12.	Григорян Айк Ишханович (кандидат исторических наук, доцент)	Общественно-политическая мысль Армении в 19 веке	Русский	2	
13.	Григорян Айк Ишханович (кандидат исторических наук, доцент)	Национальная политика в СССР	Русский	2	
14.	Егян Мариам Ервандовна (кандидат исторических наук, доцент)	«История Армении» общий курс	Русский	2	
15.	Гор Араратович Маргарян(кандидат исторических наук, доцент)	Цивилизация классического ислама	Русский	2	

16.	Гор Араратович Маргарян(кандидат исторических наук, доцент)	Вопросы истории Южного Кавказа в призме сравнительного анализа восточных и европейских исторических источников (VII-XV вв.)	Русский	2
17.	Gor Ararat Margaryan, (Doctorat en histoire (PhD), Maître de conferences)	La Civilisation de l'Islam classique.	Française	2
18.	Gor Ararat Margaryan, (Doctorat en histoire (PhD), Maître de conferences)	L'histoire du Caucase du Sud sous le prisme de l'analyse comparative des sources orientales et européennes (du milieu du VIIe siècle à la fin du XVe siècle).	Française	2

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:
Ֆակուլտետի որակի ապահովումն իականացվել է դեկանատի և ամբիոնների կողմից: Հաշվետու տարվա ընթացքում նախապես հաստատված գրաֆիկի համաձայն կազմակերպվել են դասալսումներ, որի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ դասավանդման որակի, մեթոդիկայի, առարկայական նկարագրերի և դասավանդվող նյութի համապատասխանելիության վերաբերյալ: Հաշվետու տարում թարմացվել են ֆակուլտետում դասավանդվող առարկայական նկարագրերն ու տրհումները՝ դրանք համապատասխանեցնելով նոր ուսումնական պլաններին և Բլյում տաքսոնոմիայի սկզբունքներին: Դասալսումների արդյունքների հիման վրա կազմակերպվել են քննարկումներ, որին

մասնակցել են նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, տրվել են հանձնարարականներ որակի հետագա բարելավման ուղղությամբ:

Ֆակուլտետի ներքին որակի ապահովման ուղղությամբ ֆակուլտետը մշտապես համագործակցել է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ:

Որակի ապահովման ուղղությամբ ամբիոնների կողմից հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է մշտադիտարկում googleclassroom հարթակի միջոցով:

Ֆակուլտետի որակի հետ կապված խնդիրները պարբերաբար քննարկվել է ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Ֆակուլտետի որակի ապահովման աշխատանքներում ընդգրկված են եղել համալսարանի համապատասխան ստորաբաժանումները, մասնավորապես ԿԿրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը:

Ֆակուլտետի որակի ապահովման աշխատանքներում պարբերաբար ընդգրկվել են ուսանողներ: Դեկանատը և ամբիոնները պարբերաբար կազմակերպել են առցանց հանդիպումներ ֆակուլտետի ուսանողների հետ, երբեմն առանձին կուրսերով, երբեմն ըստ մասնագիտությունների: Հանդիպումների ժամանակ քննարկվել են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ հարցեր:

Նշված խնդիրները պարբերաբար բարձրացվել են նաև ֆակուլտետի խորհրդում ընդգրկված ուսանողների կողմից: